ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատ (Արմավիր) համայնքի 2017թ – ի համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվություն

1. Գործավարություն.

2017թ – ի ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել է 121 դիմումներ և առաջարկություն-ներ, որոնք ստացել են իրենց համապատասխան լուծումները: Համայնքի բնակիչներին տրամադրվել են 545 հատ տեղեկանքներ, բնութագրեր: Հղվել են 142 հատ պաշտոնական գրություններ մարզային և ֆեդերալ ենթակայության կառույցների ղեկավարներին: Համյանքի ղեկավարի կողմից ընդունվել է 65 որոշում: Արձակվել է 19 կարգադրություն:

2. Ավագանու գործունեություն.

2017թ – ի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 6 հերթական և 4 արտահերթ նիստ: Արտահերթ նիստերը հրավիրվել են համայնքի համար խիստ հրատապ հարցերի քննարկման և լուծումներ տալու համար, մասնավորապես կատարվել է փոփոխություններ և լրացումներ համայնքի 2017 թվականի բյուջեում: Հաստատվել է համայնքի 2018 թվականի բյուջեն, հաստատվել է մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը: Սահմանվել է 2018 թվականի ընթացքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը: Ավագանու քննարկմանն են ներկայացվել է 69 դիմումներ և ստացել իրենց համապատասխան լուծումները:

3. Գյուղատնտեսության ոլորտ.

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի առկա հողատարածքներն ու ցանքերն են.

բնակավայրային նշանակության հողեր – 140 հա.

գյուղ. նշանակության հողատարածք – 329.5 հա, որից

խաղողի այգի – 57.2 հա

պտղատու այգի – 101.1հա

2017թ – ի կատարվել է 36 հա. հացահատիկի, լոբու, 29 հա., կարտոֆիլի 19 հա., բոստանային կուլտուրաների 26 հա., վարունգի 11 հա., լոլիկի 24 հա., սեղանի ճակնդեղ 1 հա., սոխի 11 հա., և այլ բանջարեղենի 2 հա., եգիպտացորենի 21 հա., առվույտ 26 հա., կաղամբի 2 հա., սմբուկի 14 հա. և տաքդեղի 11 հա. ցանքեր:

Անասնագլխաքանակ.

խոշոր եղջերավոր անասուններ – 676 գլուխ, որից կովեր՝ 198 գլուխ

մանր եղջերավոր անասուններ – 2572 գլուխ ոչխար, որից մայրեր՝ 2202

419 խոզեր, որից մայրեր՝ 60

մեղվաընտանիք – 603

թռչուններ – 4773

2017 թվականին կատարվել է 180 հա. ցրտահերկ, ցանվել է 36 հա. ցորեն:

4. Հողի հարկ և գույքահարկ.

2017թ – ին համայնքային բյուջեով նախատեսվել է 5899.3 հազար դրամ հողի հարկ: 01.01.2018թ. դրությամբ համայնքի հողօգտագործողներից գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 6127.7 հազար դրամ հողի հարկ, որը կազմում է համայնքի տարեկան հողի հարկի 103.8% - ը:

Գույքահարկը բյուջեի եկամտային մասով նախատեսվել է 4960.5 հազար դրամ: 01.01.2018թ – ի դրությամբ գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 4952.8 հազար դրամ, որը կազմում է տարեկան գույքահարկի 99.8% - ը: 2017 թ- ի բյուջեով նախատեսվել է 1660.0 հազար դրամ տեղական տուրքեր և վճարներ: 01.01.2018թ – ի դրությամբ գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 1006.0 հազար դրամ, որը կազմում է տարեկան 60.6% : 2017 թ- ի բյուջեով նախատեսվել է 747. 0 հազար դրամ հողի վարձավճար: 01.01.2018թ – ի դրությամբ գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 838.0 հազար դրամ, որը կազմում է տարեկան 112.2% : 2017 թ – ի բյուջեով պետության կողմից տարվա ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան կազմել է 32343.2 հազար դրամ, որը ֆինանսավորվել է 100% - ով: 2017թ – ի բյուջեում սեփական եկամուտները նախատեսվել է 13266.8 հազար դրամ: 01.01.2018թ - ի. դրությամբ սեփական եկամուտների փաստացի մուտքերը կազմել են 12924.5 հազար դրամ: Սեփական եկամուտները կատարվել են 97.4 % - ով:

Ծախսեր.

Այգեշատի գյուղապետարանը 2017թ – ի հունվար ամսից առ 01.01.2018թ – ի դրությամբ կատարել է հետևյալ ծախսերը:

1. վճարվել է ընթացիկ աշխատավարձ – 25232.9 հազար դրամ
2. կատարվել է թերթի բաժանորդագրության ծախս – 48.0 հազար դրամ
3. պարտադիր վճար փոխանցվել է - 55.6 հազար դրամ
4. փոխանցվել է էլեկտրոէներգիայի գումար – 5079.4 հազար դրամ
5. փոխանցվել է գազի օգտագործման գումար – 410.7 հազար դրամ
6. միջոցառումների համար՝ մայիսի 28-ի, վերջին զանգի և ամանորյա միջոցառումների համար նախատեսվել և կատարվել է ծախս – 400.0 հազար դրամ
7. մանկապարտեզին փոխանցվել է սուբսիդիա - 6481.4 հազար դրամ
8. նվիրատվություն է արվել շահույթ չհետապնդող կազմակերպություններին – 16.6 հազար դրամ
9. գրենական պիտույքներ ձեռք բերելու համար փոխանցվել է - 684.0 հազար դրամ
10. անապահով ընտանիքներին ցուցաբերվել է դրամական օգնություն – 2640.0 հազար դրամ
11. մեքենաների և սարքավորումների ընթացիկ վերանորոգման համար կատարվել է ծախս – 66.0 հազար դրամ
12. ծաղիկ-ծաղկեպսակ ձեռք բերելու համար փոխանցվել է - 467.5 հազար դրամ
13. ինտերնետ և ֆիքսված կապի համար փոխանցվել է - 146.4 հազար դրամ
14. համակարգչային ծառայության համար փոխանցվել է - 40.0 հազար դրամ
15. Կենցաղային և հանրային սննդի նյութեր ձեռք բերելու մանար – 200.0 հազար դրամ
16. հատուկ նպատակային նյութեր ձեռք բերելու համար փոխանցվել է - 328.5 հազար դրամ
17. աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացնելու համար փոխանցվել է - 990.0 հազար դրամ

Ազգաբնակչություն.

ա) Համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 2132 մարդ:

2017թ – ի ընթացքում Այգեշատ համայնքում ծնվել է 12 երեխա, գրանցվել է 18 մահ:

Ընտանեկան նպաստ ստացողներ 19 ընտանիք:

Համայնքում թոշակառուները 219 մարդ է:

5. Կրթություն և գիտություն.

Համայնքում գործում է մեկ դպրոց 198 աշակերտով: Մեկ մանկապարտեզ՝ հաճախող 54

երեխայով և 8 աշխատողով:

6. Մշակույթ.

Համայնքը ունի մեկ մշակույթի տուն 4 աշխատողով, գործող գրադարան 1 աշխատողով:

Մշակույթի տանը գործում է ազգագրական պարերի խումբ՝ 60 երեխաներով:

7.Առողջապահություն.

Համայնքում գործում է բժշկական ամբուլատորիա ՀՈԱԿ-ը՝ 6 աշխատողով:

8. Զինակոչ.

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի գործուն աջակցությամբ պատշաճ կերպով կազմակերպվել է 2017թ-ի զինակոչը: Կատարվել է պլան առաջադրանքը:

9 . Միջոցառումներ և սոցիալական ոլորտ.

Պատշաճ կերպով նշվում են ՀՀ պետական տոները և հիշատակի օրերը: Պարբերաբար իրականացվում է գյուղի փողոցների աղբահանությունը: Անխափան իրականացվում է խմելու ջրի մատակարարումը: 2017 թվականի երկրորդ կիսամյանկում համայնքի փողոցների լուսավորության հարցը ամբողջությամբ լուծվել է:

10. Համայնքի հիմնախնդիրներ.

ա) Համայնքի հիմնախնդիրներից է համարվում համայնքային նշանակության ճանապարհների և դաշտամիջյան ճանապարհների նորոգումը (հարթեցում, ավազապատում), որը կկազմի մոտ 20.000.000 ՀՀ դրամ

բ) Վերանորոգման կարիք ունի նաև համայնքապետարանի շենքը, որի ծախսը կկազմի մոտ 25.000.000 ՀՀ դրամ

դ) համայնքի հիմնախնդիրներից է նաև համայնքի նոր թաղամասերի գազաֆիկացման և էլեկտրոֆիկացման հարցը, որի համար կծախսվի մոտ 10.000.000 ՀՀ դրամ:

Այգեշատ /Արմավիր/ համայնքի ղեկավար՝ Ա. Մխիթարյան